



## ՈՐՈՇՈՒՄ N 13

29 հունվարի 2021 թվականի

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»  
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ  
ԿԱԶՄՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ  
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 42-րդ կետի 6-րդ ենթակետով և «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի աշխատակարգի 2.2 կետով, 2.4 կետի 6-րդ ենթակետով և 8.1 կետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Ստեղծել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021 թվականի հաստիքացուցակի կազմման սկզբունքներն ուսումնասիրող ժամանակավոր հանձնաժողով՝ հետևյալ կազմով. Գոհար Մամիկոնյան, Դավիթ Ափոյան, Խաչիկ Աբաջյան, Կառլեն Խաչատրյան, Միքայել Մալխասյան:

2. Հանձնարարել հանձնաժողովին «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի քննարկմանը ներկայացնելու ուսումնասիրության արդյունքները՝ համապատասխան առաջարկներով:

**Հոգաբարձուների խորհրդի նիստը նախագահող՝**

**Ա. Չուբարյան**